# Ազգ
Azg

31 ՄԱՅԻՍ - 6 ՀՈՒՆԻՍ 2024 ՈՒՐԲԱԹ 019(5801)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## ԱՄՆ-ից հետո Շուշի է մեկնում ԳԴՀ դեսպանը, որ գովի Բաքվին

ԳԴՀ-ն անթաքույց քծնում է Բաքվին: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ չեզոք միջնորդություն ստանձնելու պատրաստակամությունը ո՞ր պահից սկսյալ ջնջվեց, հավանաբար տեղյակ կլինեն ՀՀ ԱԳՆ-ում: Երկու փաստ վերջին օրերից: ԳԴՀ ԱԳՆ Արեւելյան Եվրոպայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրների վարչության ղեկավար **Մաթթիաս Լյութթենբերգը** մայիսի 28-ին X-ի հարթակում շնորհավորել է Ադրբեջանի անկախության տոնը, մայիսի 26-ին՝ Վրաստանի, իսկ ՀՀ-ին ուղղված որեւէ տող չկա: Ադրբեջանում ԳԴՀ դեսպան **Ռալֆ Հորլեմաննը** մայիսի 28-ին Բաքվից շնորհավորելով ադրբեջանցիներին ծանուցում է, թե 3 օրյա այցով Ղարաբաղում է: Մայիսի 29-ին Շուշիից գրում է, թե սիրահարվել է քաղաքին, տպավորված է վերակառուցման ծրագրերը տեսնելով: Ո՞վ պիտի հիշեցնի դեսպանին, որ Շուշիում քանդել են Կանաչ ժամը, Ղազանչեցոցը այլակերպվում է... ՀՀ ԱԳՆ-ն, Ս. Էջմիածինը լուռ պիտի մնա՞ն:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Բռնակալը ընդունակ է ամեն բանի

Իմ այս սյունակում նպատակ ունեի մեկ անգամ եւս անդրադառնալ ՀՀ ոստիկանությանը, նրա ապօրինի արարքներին, զանգվածային բռնություններին, խոշտանգումներին, ինչպես նաեւ անմակարդակ «պրոֆեսիոնալիզմին»: Սակայն Մայիսի 28-ին Սարդարապատի հուշարձանի տակ պատահած՝ իսկապես աննախադեպ միջադեպը ստիպեց ինձ լուսարձակը բացել Հայաստանում եւ ողջ աշխարհում մեզ անոթանք բերած արարքի վրա, որտեղ ոստիկանությունը հեսին գործիք չէր:

Ամենայն Հայոց Հայրապետի ու նրան ուղեկցող եկեղեցական դասի առաջ 2-3 անգամ ոստիկանական կենդանի պատնեշ կանգնեցնելու գործողությունը ցուցանեց պառակտումի, ատելության ու տխմարության այն վիճակը, որը հրահրվել ու շարունակում է հրահրվել իշխող խմբի ու դրա պարագլխի կողմից ընդդեմ հայ ազգի, հայկական ոգու, հավատալիքների, իղձերի եւ արժանապատվության: Դա նվաստացումն էր համայն հայության՝ հաչս մեզ ճանաչող բոլոր ազգերի, եկեղեցիների, կրոնների, պետությունների, բարեկամների ու թշնամիների:

Կարիք չկա վերհիշեցնելու Սարդարապատի համաժողովրդական ճակատամարտի համաձույլ առնչությունները Մայր աթոռ Ս. Էջմիածնի, Ամենայն Հայոց երջանկահիշատակ Հայրապետ Գեւորգ Ե կաթողիկոսի, Գարեգին Սրբազանի (հետագայում՝ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), մյուս հոգեւորականների միջեւ: Սակայն կարիք կա, ի լուր մերօրյա Բռնապետի ու նրա արբանյակների, որ խորհրդային տարիներից ի վեր մեր Հայրապետները եկեղեցական թափորով եղել են նույն վայրում, խունկ եւ աղոթք մատուցել ճակատամարտում ընկած հերոսների հիշատակին: Կարիք կա, քանզի Բռնապետն ու նրա հետեւորդները «սադրանք» են համարում Կաթողիկոսի ու հոգեւոր դասի ներկայությունը այնտեղ: Եթե սադրանք՝ ապա, ուրեմն, տասնամյակներ շարունակ մեր Եկեղեցին սադրել է: Սադրել է ո՞ւմ դեմ, խորհրդային իշխանությա՞ն, նախկին երեք նախագահների՞, ներկայի մեծատաղա՞նդ Սադրիչի՞...

Ո՞վ կարող է բացատրել, թե ո՞րն էր Բռնապետի նպատակը սարդարապատյան միջադեպի ստեղծման: Չէ՞ր կարող նա ազգին, եկեղեցուն ու պետությանը խնայել այդ խայտառակությունը: Չէ՞ր կարելի արարողապետի միջոցով Հուշարձան ժամանելու պահը ճշտել, դասավորել: Եվ, մյուս կողմից, անկարելի՞ էր, գեթ այդ օրը, մի կողմ թողնելով միակը, մեծագույնը, բարձրագույնը, սրբազնագո՞ւյնը իրեն կարծելու հիվանդագին ախտը, համատեղ կազմակերպել հերոսների հիշատակի ոգեկոչման արարողությունը: Խոմ Մայիսի 28-ը դեկտեմբերի 31-ը չէր, որ Բռնապետը կռիվ տար «թելեվիզորից» առաջինը ելույթ ունենալու համար:

Սարդարապատի ամոթալի միջադեպի հրահրումը, ոստիկանական փլվող պատնեշներ կանգնեցնելու, եկեղեցականների վրա ձեռք բարձրացնելու գաղափարը ծնվել է նույն ուղեղում, որի գիտական բնութագիրը կարող են տալ հոգեբույժները, թեեւ առանց մասնագիտական ախտորոշման էլ տեսանելի են ախտանշանները: Ապացույց՝ մեր մարդկային, տարածքային, քաղաքական ու քաղաքակրթական կորուստները, նաեւ՝ միասնականության կորուստը, այլեւ՝ արժանապատվության կորուստը:

Կորստաբեր է այս մարդը: Չզսպվելու պարագայում կործանելու ենք բոլորս, ներառյալ նրա հետեւորդները, նրա հրահանգները կատարողները: Նա ընդունակ է ամեն բանի, անգամ՝ արյուն թափելու:

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

## Աղետի գոտի

*Գրիչի փոխարեն՝ բահ, գրքի փոխարեն՝ ցեխ. ո՞ւր են փրկարարները*

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

Աղետի գոտու վերածված Լոռու եւ Տավուշի մարզերում հետեւանքները վերացնելու առաջնագծում կամավորներ են: «Ազգ»-ի տեղեկություններով՝ Ալավերդի խոշորացված համայնքում այս պահին աշխատում են Հայաստանի՝ ընդամենը 3 մարզի փրկարարներ: Դեբեդի հեղեղման հետեւանքները վերացնելու աշխատանքներում ինչո՞ւ ներգրավված չեն փրկարար ծառայության բոլոր մարզերի աշխատակիցները: Պատկան մարմինները խուսափում են հարցին պատասխան տալ:



Արտակարգ իրավիճակների բոլոր՝ միջազգային ու տեղական, ուղեցույցներում եւ ռազմավարական պլաններում սեւը սպիտակի վրա գրված է, որ աղետի գոտում առաջնահերթ պետք է ներգրավվեն փրկարարները, այնուհետ՝ ուժային մյուս կառույցների ներկայացուցիչները՝ ոստիկանները, զինվորականներն ու այլք:

Եթե վերոնշյալ կառույցների ուժերը չեն բավարարում, պետությունը կարող է ներգրավել հարակից բնակավայրերի համայնքային աշխատողներին, ապա նոր միայն դիմել ուսանողներին ու մյուսներին:

Հայաստանի կառավարությունը, փաստացի, սկսել է վերջից, այսինքն՝ գործը թարս կողմով է առաջ տանում:

Հատկապես քննական այս շրջանում ուսանողին ասել, թե գրիչը թող, գնա բահ բռնի, մեղմ ասած՝ ոչ կոմպետենտություն է: Առավել տարակուսելի է, երբ նման բան հորդորում է կրթության համար պատասխանատու թիվ մեկ պաշտոնյան՝ ԿԳՄՍ նախարարը:

Կամավորությունը հրաշալի բան է, բայց ոգեւորիչ գրառում կատարող տիկին Անդրեասյանը պատկերացնո՞ւմ է, հաշվարկե՞լ է՝ ուր է ուղարկում ուսանողին, ինչի՞ց է զրկում եւ ի՞նչ վտանգի մեջ կարող է ընկնել գրքից կտրվող երիտասարդը:

Եթե ոստիկանների, զինվորականների, եւ, առաջին հերթին, փրկարարների ուժերը չբավականեցնեն աղետի գոտու հարցերը լուծելու համար, Լոռի եւ Տավուշ կնետվենք բոլորս: բայց այդ ամենը թողնել ուսանողի ուսերին, սխալ է, այն էլ՝ մեծ:

Աշխարհի մեկ այլ երկրում չի կարող հանդիպել, որ փրկարարի փոխարեն ուսանողին ցեխ մաքրել տան, այն էլ՝ առանց վարձատրության:

⇨8


Ռամկավար Ազատական Կուսակցութիւն
ARMENIAN DEMOCRATIC LIBERAL PARTY
RAMGAVAR - LEBANON


## Յայտարարութիւն
### Լիբանանէն Ողջոյն Սրբազան Պայքարին

## ՊԱՏԻՒ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր Հայրենիքին ու ժողովուրդին պատրած այս դժնդակ օրերուն, մեզի համար բնաւ զարմանալի չէր հայրենիքի փրկութեան զոհասեղանին Գերշ. Տէր Բագրատ արքեպս. Գալըստանեանին նման հայրենաշունչ հոգեւորականի մը յայտնուիլը, առաջնորդելու համար մեզի համար արտամօտիկ շարժում մը, որ ունի ՀԱՅ, ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ու ԱՍՏՈՒԱԾ խորիմաստ նշանաբանը:

Մեծ թիւով անմեղ զոհեր տալով պատերազմ ու Արցախ կորսնցուցած, Հայրենիքի մեր սուրբ հողէն կենսական մասնիկներ թշնամիին զիջուող մղձաւանջային օրեր ապրող ապիկար ու անհասկնալի ղեկավարութեամբ մը դէպի անդունդ սլացող մեր ժողովուրդը, այսօր՝ Սրբազան հօր առաջնորդութեամբ կ՚ապրի ազգային զարթօնքի ու հոգեւոր վերածնունդի օրեր: Հայ ազգի պատասխանատու եւ արժանապատիւ զաւակները, մերժելով իրենց պարտադրուած անպատուաբեր իրավիճակը, անվերապահօրէն միացած են համահայկական այս շարժումին:

Սրբազան հայրը իր հայրենասիրական հարուստ կենսափորձով ու Հայ ժողովուրդի զաւակներուն մօտ վայելած վարկով ու համաժողովրդային վստահութիւն ունեցող այն անձնաւորութիւնն է, որ արժանաբար վերցուցած է պատասխանատուութիւնը համախմբելու մեր ազգը Հայրենիքի մէջ եւ ի Սփիւռս աշխարհի՝ Հայրենիքը ամէն բանէ վեր սեպելու սկզբունքին շուրջ:

Մենք աւելի քան ուրախ եւ հպարտ ենք, որ Սրբազան հօր միջոցաւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, անգամ մը եւս բոլորս համախմբող մօր մը համբերութեամբ ու Հայրենի հողը պահելու սուրբ առաքելութեան պատմական իր դերով, ձեռնամուխ է Հայոց պետականութեան փրկութեան, որուն համար արժանի է մեր յարգանքին ու մեծարանքին:

Արդ, Լիբանանեան մեր ծննդավայրէն Ռամկավար Ազատական Կուսակցութեան անդամներուն անունով կ՚ողջունենք Գերշ. Բագրատ Սրբազանը եւ յանուն Հայրենիքի իր առաջնորդութեամբ մղուած ազնիւ պայքարը:

Ի հեճուկս Լիբանանի մեր կուսակցութեան միաւորին վրայ ապօրինաբար ինքզինք ստեղծապես կարգած մարդուկին՝ նիկոլամէտ հակումներուն եւ Սփիւռքի մեր շարքերուն պառակտման միտումներուն, կը զօրակցինք Հայաստանի Հանրապետութեան արժանապատիւ վարչապետը դառնալու Սրբազան հօր անձնամասնոյց եւ անձնուրաց թեկնածութեան եւ մեր ջերմագոյն ողջոյնները կը յղենք սրբազան պայքարին::

Թող, որ Աստուած օրհնէ «Տաւուշը յանուն Հայրենիքի» համահայկական շարժումին իւրաքանչիւր քայլը, որպէսզի շուտով բացուի մեր ժողովուրդին նոր արշալոյսը, ի փառս եւ ի յաւերժութիւն մեր Հայրենիքին ու Պետականութեան:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**
**ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ**
**30 Մայիս 2024**

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Դաստիարակութիւնն ու մեր պատանիները

Սուրիա, 1963-էն ետք, իշխող կուսակցութեան որոշումով դպրոցական վերի կարգի աշակերտութեան պարտադրուեցաւ զինուորական տարազ կրել եւ այդ տարազով ալ դպրոց յաճախել: Սկիզբը, այս տարօրինակ կացութեան առջեւ անհանգիստ եւ անյարմար զգացինք, թէեւ միատարր մեր տարազները որոշ նպատակ կը հետապնդէին: Դպրոցներուն մէջ զինուորական դաստիարակութիւն պիտի ջամբուէր, քանի որ երկիրը պէտք է պատրաստուէր դիմակայելու թշնամական որեւէ յարձակում, իսկ երկսեռ երիտասարդութիւնն ալ պէտք է անպայման մասնակից դառնար երկրի պաշտպանութեան: Միանուագ տարազը նաեւ օգտակար եղաւ ծնողներուն, որոնք ձերբազատուեցան ամէնօրեայ հագուստ-կապուստի տաղտուկէն:

Շաբաթը մէկ օր բանակային սպայ մը կու գար, տեսական զինուորական գիտելիքներ կը փոխանցէր, ատենը անգամ մըն ալ գործնական դասեր կ'անցնէինք, զէնքի գործածութեան, նշանառութեան եւ այլն:

Աւարտական դասարանի նախօրէին, ընդհանուր բանակում մը տեղի կ'ունենար տղոց համար, վրաններու տակ. երկու շաբաթ դպրոցականները զինուորի կեանքով կ'ապրէին: Իսկ աղջիկները կը հետեւէին շտապօգնութեան երկշաբաթեայ դասընթացքի:

(Այստեղ անհրաժեշտաբար ըսեմ, որ սուրիահպատակ երիտասարդը զինակոչի ենթակայ չէ եթէ ուսումը կը շարունակէ, նոյնիսկ մինչեւ դոկտորական, ոչ թէ Հայաստանի նման, որ 12-րդ կարգէն շրջանաւարտը արդէն զինակոչի ենթակայ է: Սուրիոյ մէջ նաեւ զինծառայութեան չեն կանչուիր ընտանիքին միակ արու զաւակները):

Զինուորական այս դաստիարակութենէն առաջ արդէն սփիւռքի մեր ակումբներուն մէջ կը գործէին սկաուտական շարժումներ, նոր սերունդին յաւելեալ օգտակար դաստիարակութիւն ջամբելու համար: Ակումբներու մէջ սկաուտական շարժումները եւ անոնց ծրագիր-կանոնագրին համաձայն՝ պարման-պարմանուհիները ուղղել դէպի գիտակից, ազնիւ, բարեգործութեան նուիրուած, զոհաբերութեան ոգիով տոգորուած, ինքնավստահ սերունդ մը պատրաստելու ճիգերը պէտք է երեւային անոնց առօրեայ կենսակերպին, անոնց նիստուկացին մէջ, թէ չէ ի՞նչ իմաստ ունէր տրուած դաստիարակութիւնը: Ասոր կու գար միանալու զինուորական դաստիարակութիւնն ալ եւ կ'ակնկալուէր, որ երկուստեք յաջողէին որոշ արեւելում մը տալ նոր սերունդին ի փառս Սուրիոյ եւ անշուշտ անոր ժողովուրդին :

Այստեղ, ի Հայաստան, խորհրդային տարիներուն կուսակցական պարտադրանքով եղած են պիոներական շարժումներ, վերեւը յիշուած բարեմասնութեանց կողքին առաւել եւ ամենակարեւոր նպատակով ապագայի կուսակցականներ պատրաստելու հեռանկարով:

Հայաստանի մէջ ալ կրթական ծրագիրի մէջ ներառուած է զինուորական դաստիարակութիւնը, անշուշտ պարզ է նպատակը՝ թշնամի երկու պետութիւններով պաշարուած երկիր մը կարիքն ունի ինքնապաշտպանութեան համար կռուող երիտասարդութեան:

Ես, որ կրթական ասպարէզի ծառայող մըն եմ, այստեղ չեմ տեսած ու չեմ զգացած որ մեր պատանիները զինուորական դաստիարակութեան կը հետեւին եւ չեմ ալ գիտեր, թէ ի՞նչ լրջութեամբ եւ խստութեամբ, որովհետեւ կը տեսնեմ մեր պատանիներուն վարած արտադպրոցական կեանքը, քիչ մը սանձարձակ, անպատասխանատու, գրպանի հեռախօսով ժամեր սպառնող, ծխող, աղջիկներու հետ մտերմական պահեր որսացող... Անշուշտ ոչ բոլորը, սակայն ոչ արհամարհելի թիւ մը կայ ըսածներս հաստատող: Զինուորական դաստիարակութիւն ստացող պատանիէն պէտք չէ՞ ակնկալել, որ իր վարքուբարքով տարբեր ըլլայ անդաստիարակներէն:

Եթէ հաւատացողներ կան, որ ներկայ խաղաղութեան գործընթացի յաջողութեան պարագային այլեւս ո՛չ թշնամի պիտի մնայ, ո՛չ մեր հանգիստը խանգարող, թող շատ չտարուին երազանքներով, թշնամին անկուշտ է, երախն ալ միշտ բաց է լափելու պատրաստ, գիտնանք ինչ «լափ» պիտի կերցնենք անոր, երբ «խաղաղութեան» մեղրամիսը վերջանայ. յիշեցէք Վարդան Այգեկցիին առակը ոչխարներու եւ գայլերու մասին:

Երբեմն սրտցաւ քաղաքացիներու կողմէ անհատական կոչեր կ'ըլլան զինավարժութեան, նոյնիսկ մասնաւոր կազմակերպութիւններ սկսած են մարզել պատանիները, ինչ որ օգտակար է, եթէ անշուշտ լաւ ծրագրուած է, այն ատեն երկիրը կը սկսի լրջօրէն ապրիլ ինքնապաշտպանութեան ոգիով, պատրաստակամութեան, որ յոյսով կը լեցնէ սրտերը եւ նաեւ հպարտութեամբ:

# Ովքե՞ր են հավակնում Իրանի նախագահի պաշտոնին

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**Իրանագետ**




Ուղղաթիռի ողբերգական վթարից մեկ շաբաթ անց իրանական մամուլն ակտիվորեն քննարկում է գալիք նախագահական ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած հնարավոր թեկնածուների տրամադրությունները, որոնց շարքում առանձնանում է ավիավթարի զոհ դարձած նախագահ **Ռայիսիի** տիկնոջ՝ **Ջամիլե Ալամ օլ-Հոդայի** անունը:

Խնդիրն այն է, որ նախկին նախագահի տիկնոջ տվյալները նախ պետք է համապատասխանեն Սահմանադրությամբ նախատեսված պայմաններին ու նա պետք է կարողանա հաղթահարել երկրի Պահապանների խորհրդի բոլոր արգելքները, որի համար թեկնածուն որոշակի տվյալներից բացի, նաեւ պետք է լինի «քաղաքական այր»: Այստեղ հարց է առաջանում՝ կանայք նո՞ւյնպես կարող են «քաղաքական այր» համարվել:

Նախորդ շրջանի նախագահական ընտրություններին կանանց մասնակցության իրավունքը ճշտելու նպատակով, դեռեւս չորս տարի առաջ հարցում էր կատարվել Պահապանների խորհուրդ, որին ի պատասխան խորհրդի խոսնակ **Քյաթխոդային** հավաստիացրել էր, որ կանանց գրանցման հարցում որեւէ արգելք կամ խոչընդոտ չկա, եւ խորհուրդը հայտ ներկայացնող թե՛ տղամարդկանց եւ թե՛ կանանց մասնակցության իրավունքը ճշտելուց հետո, պարզաբանումներ է ներկայացնում: Սակայն, նախորդ ընտրություններից եւ ոչ մեկի ժամանակ դեռեւս ոչ մի կին թեկնածու չի գրանցվել:

Սակայն նախագահական ընտրություններին կանանց մասնակցության մասին կա նաեւ այլ մոտեցում. Բանիմացների խորհրդում ավանդական իրավագիտության կողմնակիցներն այն կարծիքին են, որ եթե կինը չի կարող դատավոր դառնալ, ուրեմն նախագահ դառնալու իրավասություն էլ չպետք է ունենա:

Իսկ ո՞վ է նախկին նախագահ Էբրահիմ Ռայիսիի կինը:

Տիկ. Ջամիլե Ալամ օլ-Հոդան Մեշհեդի ուրբաթօրյա իմամ-ջումայի՝ Գերագույն հոգեւոր առաջնորդին ներկայացնող քարոզպետի ավագ դուստրն է: Եթե տիկ. Ալամ օլ-Հոդային հաջողվի գրանցվել եւ ընտրություններում հաղթանակ տանել, ապա նա ոչ միայն կկարողանա շարունակել ամուսնու անավարտ գործը, այլ նաեւ կարող է նախադեպ ստեղծել ու ներկայանալ որպես Իրանի առաջին կին նախագահ:

Դեռեւս անցյալ տարվա սեպտեմբերին իրանական *Press-TV* հեռուստաալիքի կողմից փորձ էր արվել տիկ. Ջամիլե Ալամ օլ-Հոդային ներկայացնել որպես երկրի առաջին տիկին: Սակայն, նա որոշ ժամանակ անց, հայտարարել էր, որ առաջին տիկնոջ տիտղոսը պատկանում է գերագույն հոգեւոր Առաջնորդ **Ալի Խամենեիի** տիկնոջը:

Նախկին նախագահ Էբրահիմ Ռայիսիի տիկնոջ՝ Ջամիլե Ալամօ-Հոդայից բացի, խոսվում է նաեւ բազմաթիվ այլ թեկնածուների մասին, որոնցից մեր հանրությանը ծանոթ են՝ մեջլիսի նախկին խոսնակ **Հադդադ Ադելը**, Իրանի դատական իշխանության նախկին ղեկավար, նախկին գլխավոր դատախազ եւ անվտանգության նախկին նախարար **Ղոլամհոսեին Էժեին**, մեջլիսի նախկին բարեփոխական պատգամավոր **Ալի Մոթահարին**, կառավարության նախկին խոսնակ **Մոհամմադ Բաղեր Նոբախթն** ու բազմաթիվ այլ գործիչներ, այդ թվում՝ նախկին նախագահ **Հասան Ռոհանիի** կառավարության ԱԳ նախարար **Մոհամմադ Ջավադ Զարիֆը**, ինչպես նաեւ նախկին նախագահ **Ահմադինեժադն** ու Ազգային անվտանգության գերագույն խորհրդի նախկին քարտուղար **Ալի Շամխանին**:

Ի դեպ, Իրանում կայանալիք նախագահական ընտրություններին ընդառաջ, Շամխանիի թեկնածության մասին աղմկահարույց հայտարարությամբ է հանդես եկել ԻԻՀ նախկին նախագահ Հասան Ռոհանիի աշխատակազմի ղեկավար **Մահմուդ Վաեզին**, նշելով, որ երկրի գերագույն հոգեւոր Առաջնորդ Ալի Խամենեին 2013 թվականին դեմ էր ԻԻՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում Ալի Շամխանիի նշանակմանը:

«Էնթեխաբ» կայքում հրապարակված Վաեզիի հարցազրույցում Ռոհանիի աշխատակազմի ղեկավարը խոսել է Ռոհանիի ու նրա նախագահական շրջանում Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի պաշտոնն զբաղեցրած Շամխանիի միջեւ Իրանի միջուկային ծրագրի շուրջ առկա տարաձայնությունների մասին: Ըստ Վաեզիի, այն պահին, երբ Ռոհանին իր նախագահության երկրորդ շրջանում ջանք էր գործադրում վերակենդանացնել միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցությունները, Շամխանին Անվտանգության քարտուղարությունում ընդդիմանում էր նախագահի ջանքերին ու նենգադուլի ենթարկում Ռոհանիի նախաձեռնությունները:

Վաեզիի խոստովանությունը վկայում է Իրանի կառավարման համակարգի արտաքին քաղաքականության ու անվտանգության համակարգման հարցերում գոյություն ունեցած խորը տարաձայնությունների մասին:

Ընդ որում, ԻԻՀ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի գոյության 35 ամյա պատմության ընթացքում այս խոստովանությունն առկա տարաձայնությունների մասին վկայող երկրորդ դեպքն է: Առաջին անգամ գոյություն ունեցող տարաձայնությունների փաստը բացահայտվել է 2005 թվականին՝ երկրի նախագահի պաշտոնում Ահմադինեժադի ընտրվելուց հետո, երբ նորընտիր նախագահի ու ազգային անվտանգության խորհրդի տվյալ ժամանակաշրջանի քարտուղար Հասան Ռոհանիի միջեւ միջուկային թղթածրարի կառավարման հարցում տարաձայնություններ էին առաջացել:

Ինչ վերաբերում է նախկին ԱԳ նախարար Զարիֆին, ապա նա հերքել է ընտրություններին մասնակցելու իր մտադրությունը:

Իսկ *dolatebahar* կայքի տարածած մի տեսանյութում պատկերված են նախկին նախագահի Ահմադինեժադի համախոհները, որոնք վերջինիս խնդրում են մասնակցել նախագահական ընտրություններին, ինչին դրականորեն է արձագանքում նախկին նախագահը:

Ո՞վ է բազմելու Իրանի գործադիր իշխանության՝ Էբրահիմ Ռայիսիի մահվանից հետո թափուր մնացած աթոռին: Հունիսի 28-ին նշանակված նախագահական արտահերթ ընտրությունների ամփոփիչ արդյունքները կտան մեզ հուզող հարցի պատասխանը:

# Սամվել Կարապետյան. «Ուժեղ սփյուռքը ամուր հենարան է Հայաստանի համար»

## *Մոսկվայում անցկացվեց Armenian Business Forum 2024-ը*

**ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ**
*Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից*

Մայիսի 25-ին Մոսկվայում տեղի ունեցավ Armenian Business Forum 2024-ը, որի աշխատանքներին ներկա էր նաեւ ՌԴ-ում «**Ազգ**»-ի հատուկ թղթակիցը:

Համաժողովը դարձավ Ռուսաստանի եւ Հայաստանի ձեռներեցների երկկողմ գործընկերության եւ ռազմավարական փոխգործակցության ամրապնդման հիմնական բիզնես հարթակը:

Միջոցառումը կազմակերպվել էր «Հայ գործարարների ասոցիացիայի» կողմից՝ «Տաշիր» ընկերությունների խմբի աջակցությամբ:

Այս տարի ֆորումը համախմբել էր շուրջ 400 մասնակիցների Հայաստանից եւ Ռուսաստանից, ինչպես խոշոր բիզնեսի ներկայացուցիչների, այնպես էլ սկսնակ ձեռներեցների: Ծրագրի շրջանակում անցկացվեցին պանելային քննարկումներ, հանդիպումներ ուսանողների հետ, շնորհանդեսներ եւ նախագծերի քննարկումներ:

Բացելով ֆորումը՝ «Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ, Հայ գործարարների ասոցիացիայի նախագահ **Սամվել Կարապետյանն** ընդգծեց Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ գործընկերության ամրապնդման կարեւորությունը. «Ռուսաստանը պատմականորեն Հայաստանի հիմնական տնտեսական գործընկերն է: Մեր՝ որպես հայաստանյան գործարար համայնքի, խնդիրն այդ հարաբերությունների պահպանումն ու ընդլայնումն է: Համախմբվենք եւ «կամուրջ» դառնանք մեր երկրների միջեւ հարաբերությունների արդյունավետ զարգացման համար: Այսօր, առավել քան երբեւէ, կարեւոր է պահպանել քաղաքական, գործարար եւ մշակութային հանրության բոլոր մակարդակներում այն սերտ երկխոսությունը, որը ձեւավորվել է մեր երկու երկրների միջեւ երկար տարիների հարաբերությունների ընթացքում: Ոչ մի արտաքին հանգամանք չի կարող եւ չպետք է խոչընդոտի ռուս-հայկական համագործակցության մասնակիցների համակարգված աշխատանքին, գործընկերության զարգացմանը եւ համագործակցությանը: Եվ, իմ կարծիքով, այստեղ կարեւոր է յուրաքանչյուրիս պատասխանատվությունը»:

Բացի այդ, «Հայ գործարարների ասոցիացիայի» նախագահ Սամվել Կարապետյանն ընդգծեց սփյուռքի կարեւոր դերը՝ որպես երկկողմ համագործակցության հիմք. «Հայաստանի ներկայիս քաղաքական ուժերը չեն կարող հաշվի չառնել սփյուռքի շահերը, որն աշխատում է ոչ միայն ի շահ Ռուսաստանի, այլ նաեւ Հայաստանի: Ուժեղ սփյուռքն ամուր հենարան է Հայաստանի համար: Ուզում եմ նաեւ բոլորի ուշադրությունը հրավիրել սփյուռքի առաջ կանգնած պատասխանատվության աստիճանի վրա՝ դա վստահելի գործընկերներ լինելու սփյուռքի պարտավորությունն է»:

Սամվել Կարապետյանը նաեւ իր աջակցությունը հայտնեց հայրենակիցներին, որոնք անարդարացիորեն կալանավորված են եւ գտնվում են Բաքվի բանտում, եւ հիշեցրեց, որ այդ օրը՝ մայիսի 25-ը, **Ռուբեն Վարդանյանի** ծննդյան օրն է:

Ս. Կարապետյանը շնորհավորեց Վարդանյանին՝ ծննդյան օրվա առթիվ եւ մաղթեց նրան ու մյուս բոլոր գերիներին ուժ եւ արիություն՝ իրենց բաժին հասած փորձությունները արժանապատվորեն հաղթահարելու համար:

Բիզնես միջոցառման մասնակիցները «Հայ-ռուսական ինտեգրում՝ նոր հնարավորություններ» պանելային քննարկման ժամանակ մասնակիցները քննարկեցին տարբեր ոլորտներում երկու երկրների համագործակցության արդի հեռանկարները, ինչպես նաեւ ամփոփեցին Հայ գործարարների ասոցիացիայի անցած տարվա գործունեությունը:








Քննարկմանը մասնակցում էին Ասոցիացիայի նախագահ եւ «Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ՝ Սամվել Կարապետյանը, «Ավիլոն» ընկերությունների խմբի համասեփականատեր եւ տնօրենների խորհրդի նախագահ՝ **Կամո Ավագումյանը**, Եվրասիական զարգացման բանկի խորհրդի նախագահի տեղակալ, նախկին վարչապետ **Տիգրան Սարգսյանը** եւ երկու երկրների գործարար աշխարհի այլ ներկայացուցիչներ:

Սամվել Կարապետյանը կոչ արեց հատուկ ուշադրություն դարձնել տնտեսական օրակարգի արդի եւ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրներին, ամրապնդել փոխվստահությունը, ձգտել խորացնել տարբեր ոլորտներում գործարար կապերն ու երկխոսությունը: «Փոխշահավետ պայմաններով միմյանց լսելը, հարգելը եւ փոխըմբռնումը՝ ահա սրանք պետք է դրվեն մեր հարաբերությունների հիմքում»,- նշեց Կարապետյանը:

Առաջին բիզնես ֆորումն անցկացվել էր 2021 թվականին՝ Երեւանում, որտեղ Սամվել Կարապետյանը հայտարարել էր Հայաստանում ներդրումային ծրագրի իրականացման մասին:

«Տաշիր» ընկերությունների խմբի առաջին փոխնախագահ **Նարեկ Կարապետյանն** իր խոսքում հայտնեց, որ ծրագրի բոլոր նախանշված կետերն ավարտված են, ինչպես նաեւ զեկուցեց ընկերությունների խմբի կողմից այս ընթացքում ձեռնարկված նոր ծրագրերի մասին:

Դրանցից հիմնականը Հայաստանի Հրազդան քաղաքում նոր ՋԷԿ-ի կառուցումն էր եւ Հայաստանի էներգետիկ անվտանգության ոլորտում ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտի՝ Սեւան-Հրազդան կասկադի արդիականացումը:

2022 թ.-ին բացվեց Հայաստանի ծանր արդյունաբերության ոլորտում վերջին տասնամյակի ամենախոշոր նախագծերից մեկը՝ T-METAL պողպատաձուլական նոր գործարանը: Ձեռնարկությունը կկարողանա լուծել ոչ միայն երկրում մետաղաջարդի սակավության խնդիրը, այլեւ թույլ կտա արտահանել այն: Այդ գործարանը գրեթե 200000 քառ. մ արտադրական եւ պահեստային տարածք է զբաղեցնում դեպի հայկական երկաթուղի մուտքով, որն իր հերթին միանում է Վրաստանի Փոթիի գլխավոր ծովային նավահանգստին: Սա Հայաստանի տնտեսության համար կարեւոր եւ որակական թռիչք է, որը պետք է խթանի երկրի ողջ արդյունաբերության զարգացումը:






Անցյալ տարի բացված մեկ այլ համակարգաձեւավորող ձեռնարկություններից է AMPER ուժային տրանսֆորմատորների գործարանը: Բացի այդ, Ն. Կարապետյանը խոսեց տարածաշրջանում պղնձի էլեկտրոլիտային զտման եղանակով առաջին ձեռնարկության ստեղծման մասին:

Նարեկ Կարապետյանը խոսեց նաեւ թեթեւ արդյունաբերության ոլորտում իրականացվող նախագծերի մասին. այս ընթացքում ընդլայնվել են Լոռու մարզի TASHIR KAR տեքստիլ կոմբինատի արտադրական հզորությունները: Այս նախագիծը մի կարեւոր սոցիալական գործառույթ է իրականացնում՝ ապահովում է մարզի բնակչության զբաղվածությունը. վերջին երկու տարիների ընթացքում, աշխատողների թիվն ավելացել է 2,5 անգամ եւ կազմել 300 մարդ:

Ծրագրեր են իրականացվել նաեւ զբոսաշրջության ոլորտում. 2024 թվականին Իջեւան քաղաքում բացվել է հյուրանոց, իսկ Տաշիր քաղաքում եւս մեկը գտնվում է ավարտական փուլում: Մշակույթի ոլորտում ամենասպասված նախագիծը Երեւանի կրկեսն է, որի շինարարությունն ակտիվ ընթացքի մեջ է:

Բացի Հայաստանի առեւտրային հատվածում ներդրումներ կատարելուց, տարիների ընթացքում ընկերությունն առաջնահերթություն է տվել կորպորատիվ պատասխանատվությանը եւ աջակցում է երկրում տարբեր բարեգործական ծրագրերի, որտեղ միայն վերջին մեկ տարում Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայրում վերակառուցվել է 146 վնասված եւ ավերված տուն: Բացի այդ, «Տաշիրը» լիովին իր խնամքի տակ է առել Արցախից բռնի տեղահանված մի քանի հազար բնակիչների: Այդ աջակցությունը շարունակվում է մինչ օրս:

Սամվել Կարապետյանը նշեց, որ արցախցիներին օգնելը շարունակելու է մնալ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի առաջնահերթությունը, եւ կոչ արեց հայրենակիցներին եւս առավելագույն բոլոր հնարավոր մասնակցություն եւ աջակցություն ցուցաբերել:

Հարկ եմ համարում հիշեցնել, որ Հայ գործարարների ասոցիացիան հիմնադրվել է 2019 թվականին՝ աշխարհի հայ գործարարների միջեւ արդյունավետ աշխատանքային միջավայր ստեղծելու նպատակով:

Կարճ ժամանակում Ասոցիացիան արդեն իսկ հասցրել է ընդհանուր նպատակների շուրջ համախմբել հայազգի բազմաթիվ գործարարների, որոնք սույն տարիների ընթացքում նպատակադրված աշխատանքով ամուր կապեր են հաստատել միմյանց հետ, եւ մինչ օրս շարունակական աշխատանք են տանում դրանք ամրապնդելու եւ զարգացնելու ուղղությամբ:

Ակտիվ բիզնես ցանցի ստեղծումը Ասոցիացիայի ռազմավարական նպատակն է: Արդեն իսկ բացառիկ պայմանագրեր են կնքվել տարբեր երկրների գործարար համայնքների, պետական կառույցների եւ առաջատար ընկերությունների հետ:

Ասոցիացիայի անդամները ոչ միայն ներկայիս հաջողակ ձեռներեցներն են, այլ նաեւ ապագա գործարարներ, որոնց զարգացման համար Ասոցիացիան մի շարք կրթական միջոցառումներ է մշակել:

Նշեմ նաեւ, որ «Տաշիր»-ը ռուսաստանյան ամենախոշոր դիվերսիֆիկացված արդյունաբերական եւ շինարարական խումբն է, որը ներառում է մոտ 200 ընկերություններ եւ ձեռնարկություններ, որոնք գործում են Ռուսաստանի տնտեսության տարբեր ոլորտներում: Իր հիմնադրումից ի վեր՝ 1999 թվականին եւ 25 տարի շարունակ, «Տաշիրն» անշեղորեն ավելացնում է իր ակտիվները Ռուսաստանի շինարարության եւ զարգացման շուկայում՝ միաժամանակ հաջողությամբ ընդլայնելով իր բիզնեսն այլ՝ ֆինանսական, էներգետիկայի, արդյունաբերության, մանրածախ առեւտրի եւ ռեստորանային բիզնեսի, զվարճանքի եւ այլ ոլորտներում: Խումբն ընդգրկված է Ռուսաստանի հարյուր խոշոր մասնավոր ընկերությունների ցանկում: Աշխատակիցների ընդհանուր թիվը գերազանցում է 45 հազարը: Գործունեության աշխարհագրությունն ընդգրկում է Ռուսաստանի եւ հարեւան երկրների 51 քաղաքներ: Ընկերության հիմնադիրն ու նախագահը Սամվել Կարապետյանն է: Գլխամասային գրասենյակը գտնվում է Մոսկվայում:

# Արազ Հաճեան. Թափառական ոգով՝ Հայաստանից Անտարկտիդա

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

*ԵՐԵՒԱՆ-ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ - Լուսանկարչուհի **Արազ Հաճեանը** ծնուել է 1970-ին Հալէպում եւ նոյն թուականին ընտանիքի հետ տեղափոխուել Արգենտինա: Նախնական եւ միջնակարգ կրթութիւնը ստացել է Բուէնոս Այրէսի հայկական դպրոցներում: 1988-1995 թթ. հայոց լեզուի ուսուցչուհի է աշխատել Բուէնոս Այրէսի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ վարժարանում: Հետագայում դիզայների մասնագիտութիւն է ստացել Բուէնոս Այրէսի պետական համալսարանում: Մասնակցել է արուեստի եւ լուսանկարչութեան բազմաթիւ վերապատրաստման դասընթացների, աշխատանքները ցուցադրել է տարբեր լուսանկարչական ցուցահանդէսներում: Ունեցել է անհատական ցուցահանդէսներ Բուէնոս Այրէսում, Երեւանում, Լոնդոնում, ինչպէս նաեւ Արգենտինայի ծովային թանգարանում եւ Ուշուայայի նախկին բանտում: 2023-ին Չիլիում անցկացուող «Պատագոն ժուռնալ-2023» մրցոյթի «Մշակոյթ» անուանակարգում դարձել է ֆինալիստ:*

**-Հարգելի՛ Արազ, երբ անցեալ տարի հանդիպեցինք Երեւանում, դու հիացրիր ինձ՝ որպէս շարժուն հոգի, որն իր լուսանկարչական խցիկով շրջում է աշխարհով մէկ եւ բաց է հանրութեան բոլոր խաւերի համար: Դու քեզ աշխարհաքաղաքացի համարու՞մ ես:**

-Աւելի, քան աշխարհաքաղաքացի. ես ինքզինքս կը սեպեմ թափառական ոգի մը, որ դիւրութեամբ կը յարմարի տարբեր վայրերուն եւ հանրային ու մշակութային խումբերուն: Աշխարհի հանդէպ հետաքրքրասիրութիւնս սկսաւ Մարքօ Փոլոյի ճամբորդութիւնները կարդալէն, որոնք երեւակայութիւնս հրահրեցին խորհրդաւոր անկիւններով լեցուն աշխարհներով: Առաջին ճամբորդութիւններս, բացի ընտանեկան արձակուրդներէն, ՀՄԸՄ-ի սքաութական խումբին տարեկան բանակումներն էին, եւ երբ մեծցայ, շարունակեցի ճամբորդել: Գրեթէ միշտ ես կը յայտնուիմ տեղ մը, ուր կը զգամ, որ կրնամ մնալ եւ ապրիլ...

**-Դու ճանապարհորդել ես բազմաթիւ երկրներում: Կարո՞ղ ես նշել երեք քիչ յայտնի վայրեր, որոնք քեզ համար յատկապէս հետաքրքրական են եղել:**

-1) Իրան, 2) Հայաստան, 3) Անթարքթիքա:

Իրան. հիմնական պատճառը մարդկային գործօնն է. իրանցիները ամենէն հիւրընկալ ժողովուրդներէն են, որոնց հանդիպած եմ ճամբորդութիւններուս ընթացքին, նաեւ կան որոշ սիւրռեալիստական բնապատկերներ, ինչպէս Եազդ քաղաքը՝ իր գետնախորշերով, անցուղիներով եւ ծխնելոյզներով... Նաեւ՝ պարսկական ճարտարապետութիւնը, անուշեղէնները...



Հայաստան. որովհետեւ թէեւ ան արդէն մտած է մեծ զբօսաշրջութիւն ունեցող երկիրներու ցանկը, այնուամենայնիւ, կը մնայ տարաշխարհիկ երկիր մը: Ինծի համար Հայաստանի հետ ծանօթանալը կը հաստատէր, որ իմ միտքիս մէջը եղած երեւակայութիւնը իրական է՝ ժայռերու եզրին կառուցուած միջնադարեան եկեղեցիներ, ձորեր, համեղ պտուղներ, որոնք ես դեռ չեմ յայտնաբերած... եւ որ հոն մարդիկը միշտ պատրաստ են՝ օգնելու այցելուին:

Անթարքթիքա. քանի որ ան աւելին է, քան տեսողական փորձառութիւնը. ան զգայակա՛ն ճամբորդութիւն մըն է: Ես երկու անգամ եղած եմ Անթարքթիքա, ու թէեւ տեսողական պատկերները աներեւակայելիօրէն տպաւորիչ են, ինծի ամէնէն շատը ցնցած է հոնտեղի խոր լռութիւնը եւ բացարձակ ճերմակի հսկայական տարածութիւնը: Երբեմն ինծի կը թուէր, թէ ականատես կ՚ըլլամ տիեզերքի արարումին...

**-Վերջինի մասին չեմ կարող ասել, բայց միանգամայն համաձայն եմ քո առաջին եւ երկրորդ կէտերի հետ: Եւ չեմ զարմանայ, եթէ ասես, որ Անտարկտիկայում հայի ես հանդիպել:**

-Պատահաբար, այն նաւու բժիշկը, որով ճամբորդած եմ, Հայաստանէն էր՝ այժմ հանգուցեալ **Կոնստանտին Պետրոսեանը**: Փոխադարձօրէն հաճելի անակնկալ էր Անթարքթիքայի մէջ հայերէն խօսիլը:

**-Ո՞րն է որպէս լուսանկարիչ քո ամենաարտասովոր փորձառութիւնը:**

-Ցաւօք, աւելի քան անսովոր, ատիկա բան մըն էր, որուն ականատեսը երբեք չէի մտածեր, թէ պիտի ըլլամ: Նաեւ ամէնէն ցաւալի փորձառութիւնն էր, որուն ականատես եղայ, երբ փաստագրեցի 2023 թուականի սեպտեմբերին Արցախի բնակչութեան արտագաղթը ազերիական բռնագաւթումէն ետք: Ինծի կը թուէր, թէ ես 1915 թուականի Ցեղասպանութեան պատկերներու լուսանկարիչն եմ, եւ որ բոլոր հայերն ամուր դրոշմուած են մեր հոգիներուն մէջ: Երբեք չէի կրնար պատկերացնել, որ իմ աչքերովս կը տեսնեմ հայկական այս նոր ողբերգութիւնը...

**-Դու ծնուել ես հայ գրող, մանկավարժ, լրագրող Պետրոս Հաճեանի (1933-2012) ընտանիքում: Ո՞րն էր ամենակարեւոր դասը, որ քաղեցիր նրանից՝ որպէս մարդ եւ հայ:**

-Հայրս իր ամբողջ կեանքը Սուրիոյ եւ Արժանթինի մէջ եղած է լրագրող, գրող եւ մանկավարժ՝ նուիրուած ըլլալով դասաւանդելուն, հետազօտելուն եւ հայ մշակոյթն ու պատմութիւնը տարածելուն: Անոր աշխատանքը լայն ճանաչում ունի ամբողջ Սփիւռքին մէջ: Անոր ամենամեծ դասը մարդկային փոխյարաբերութիւններու մէջ խոնարհութիւնն ու անձնուրաց նուիրումն էր իր կոչումին, որը, իր պարագային, Արժանթինի պէս հեռաւոր երկրի մը մէջ հայկական ինքնութեան պահպանումն էր: Ի դէպ, հօրս մահուան տարին ես գացի Արարատ լեռան գագաթը բարձրանալու: Հոն թաղեցի հօրս դիմանկարը՝ փաթթուած հայկական եռագոյն դրօշակով:

**-Չնայած Արգենտինայի եւ Հայաստանի միջեւ հեռաւորութեանը, դու յաճախ ես այցելում հայրենիք եւ նրա պատմութիւնները ներկայացնում աշխարհին: Անցեալ տարի, ինչպէս նշեցիր, փաստագրեցիր արցախցիների հայրենազրկումը: Յոյս յայտնենք, որ քո յաջորդ այցերը Հայաստան միայն լինեն դրական փորձառութեամբ:**

-Ցաւալի էր, որ աշխարհի բոլոր հայերուն համար անցեալ տարին շատ ծանր հարուած մը եղաւ Արցախի հայերուն տեղահանութեան պատճառով: Այլապէս իմ իւրաքանչիւր այցելութիւնը Հայաստան լեցուն է գեղեցիկ պահերով: Ամէն անգամ երթալով՝ լրջօրէն կը խորհիմ հոն մշտապէս մնալու եւ ապրելու կարելիութեան մասին: Յուսամ, որ օր մը ատիկա կ՚ընեմ: Ինծի ամէնէն շատը կը գոհացնէ տեղւոյն հանրութեան խառնուելու դիւրինութիւնն ու նոր բարեկամներ ձեռք բերելը: Նաեւ աշխոյժ հանրային եւ մշակութային կեանքը, յատկապէս Երեւանի մէջ, ուր ես կ՚անցընեմ ժամանակիս մեծ մասը, քանի որ հոն կ՚ապրի իմ եղբայրներէս մին: Ասիկա քաղաք մըն է, ուր երբեք բաւարար ժամանակ չ՚ըլլար՝ վայելելու այն ամէնը, ինչ ան կ՚առաջարկէ: Առանձին պատմելիք նիւթ են երկիրն ուսումնասիրելը եւ ոչ միայն դասական զբօսաշրջային վայրերը այցելելը, այլ նաեւ պատմութիւններով եւ հետաքրքրական մարդոցմով լեցուն աւելի հեռաւոր վայրերը: Ես կը սիրեմ ինքնահոսի մատնուիլ, շրջիլ առանց սահմանուած երթուղիի եւ Հայաստանի մէջ պտտիլ ճամբաներու վրայ պատահական ինքնաշարժերով: Ասանկ ես կը հանդիպիմ հետաքրքրական մարդոց եւ կ՚ապրիմ անմոռանալի պահեր: Հայաստանեան ամիսներս կ՚անցնին առանց ձանձրանալու...

# Բացահայտվել են նախագրաբարյան որոշ երեւույթներ



ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում բացահայտվել են նախագրաբարյան որոշ երեւույթների արձագանքներ Արցախի բարբառում: «Սա վկայում է հնագույն ժամանակներից Արցախում հայերենի գործածության մասին»,- ասաց գիտական խմբի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու **Գ. Մխիթարյանը**:

Գրաբար-բարբառ փոխհարաբերությունների շրջանակում Լեզվի ինստիտուտի գիտաշխատողները հետաքրքրական դիտարկումներ են արել նաեւ Արցախի բարբառի ցուցական դերանունները քննելիս: Գրաբարի ցուցական դերանուններն են **սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն**, որոնցում առկա են **ս, դ, ն** արմատական բաղաձայնները, սրանք սկզբնապես ունեցել են **սո, դո, նո** ձեւերը: «Հայերենի այդ շարքն այնքան հին է, որ որեւէ օտար լեզվի ազդեցություն դժվար է պատկերացնել: Արցախի բարբառի ցուցական դերանուններն են՝ **էս, էտ, էն, ըստի / իստի, ըտի / իտի, ընդի / ինդի**: Ի դեպ, **ըստի / իստի, ըտի / իտի, ընդի / ինդի** .... դերանունները գրաբարի աստի, անդի բառերի բարբառային արտահայտություններն են»,- նշեց Գ. Մխիթարյանը:

Լեզվի ինստիտուտի մասնագետները քերականական մի շարք իրողությունների պարզաբանման հարցում ուշադրություն են դարձրել գրավոր եւ բանավոր հաղորդակցության առանձնահատկություններին: Գրավոր եւ բանավոր խոսքի տարբերակման վարկածը հիմնավորելու համար իրականացրել են V դարի գրավոր աղբյուրների մանրազնին քննություն՝ համատեքստի բնույթի պարզաբանում: Հետազոտությունները որոշակի նյութ են տալիս ոչ միայն բարբառային հայերենի, այլեւ հայոց լեզվի պատմության որոշ հարցերի պարզաբանման, քերականական տարբեր կարգերի զարգացման յուրահատկությունների լուսաբանման համար:

Լեզվի ինստիտուտի Հայոց լեզվի պատմության բաժնում հետազոտվել են նաեւ բառապաշարի իմաստային (թեմատիկ) մի շարք խմբերի արտահայտություններ հայերենի զարգացման տարբեր փուլերում: «Միջին հայերենի բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից միջնադարյան բժշկարանները կարեւոր սկզբնաղբյուր են, քանի որ դրանցում արձանագրվում են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ գործածված բազմաթիվ բառեր, որոնց մի ստվար մասը բժշկական տերմինի արժեք ունեցող ախտանուններ, դեղանուններ, կազմախոսական բառերն են: Դրանք համակարգային քննության են ենթարկվել «Մարմնի մասեր, մարմնական գործառություններ եւ պայմաններ» իմաստային (թեմատիկ) խմբում: Արձանագրված են բազմաթիվ բառեր, որոնք գործածվում են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ: Ուշագրավ են հատկապես կենդանիների անվանումներով բաղադրված ախտանունները, որոնք մատնանշում են ոչ միայն կենդանիներին, այլեւ մարդուն վերաբերող մի շարք հիվանդություններ: Գործածվել են կենդանիների (արծիվ, գայլ, գորտ, ուղտ, խեցգետին, հավ, ձի (քուռակ), մուկ, մրջիւն, պախրա) անվանումներով կազմված նոր ախտանունները, որոնք վկայված չեն գրաբարյան մատենագրության մեջ եւ գործուն կիրառությամբ աչքի են ընկնում հենց միջնադարյան բժշկարաններում»,- ասաց Գ. Մխիթարյանը:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Փարիզ

# Երանի նրանց, որ Ազնավուրի ժամանակակիցն են եղել

## *Փարիզի Le Grand Rex -ում հանդիսատեսն Ազնավուր էր երգում*

Ֆրանսիացի երաժշտարտադրող **Ժիլ Մարսալլայի** (Gil Marsalla) Directo Prod-ի համագործակցությամբ Ազնավուրի 100-ամյակը նշանավորվեց սիմֆոնիկ համերգով, որի համաշխարհային առաջնաբեմելը կայացավ ապրիլի 6-ին, 7-ին Նիցցայում: Մայիսի 10-ին եւ 11-ին իրականություն դարձավ Արամ Խաչատրյան համերգասրահում՝ դիրիժոր **Էդուարդ Թոփչյանի** ղեկավարությամբ. Ֆրանսիացի անվանի երգիչ Ժյուլ Գրիզոն (Jules Grison) Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ հնչեցրեց Ազնավուրի հանրահայտ երգերը՝ հարգանքի տուրք մատուցելով մեծ շանսոնիեին: Նույն ծրագիրը հնչեց Ազնավուրի ծննդյան օրը՝ մայիսի 22-ին կանադական Մոնրեալում, իսկ մայիսի 25-ին՝ Փարիզի Le Grand Rex -ի 2750 տեղանոց դահլիճում, որի հատուկենտ աթոռներ էին միայն պարապ մնացել:






Երեւանյան համերգների մասին երաժշտաքննադատական հոդվածներ չհաջողվեց գտնել, միգուցե դեռ կգրի մամուլը, սակայն «**Ազգ**»-ի գերուղ տարածքում փորձենք բառերով ձեւակերպել այն մեծ հրավառությունը, որ մայիսի 25-ին մատուցեց Քոլոնն նվագախումբը (LՔOrchestre Colonne)՝ դիրիժոր **Ալեքսանդրա Քրավերոյի** (Alexandra Cravero) էներգետիկ հզոր ազդակով, մենակատար **Ժյուլ Գրիզոյի** վարպետ կատարողականով:

Art-deco ոճով ամերիկյան կինոդահլիճի նմանողությամբ 1932-ին կառուցված Le Grand Rex -ը, որ ծառայում է որպես կինոյի, թատրոնի, համերգի դահլիճ, որ1981-ից պետական պահպանության տակ է՝ որպես պատմական հուշարձան, մայիսի 25-ին Ազնավուրի 100-ամյակին նվիրված համերգի առիթով հյուրընկալել էր աշխարհի տարբեր լեզուներով խոսող հանդիսատես, որոնց թվում, բնականաբար ֆրանսախոսները տեսակարար կշիռ էին կազմում, բայց հայոց լեզուն էլ ականջիս հասնում էր: Ժամը 20.30-ն է, աջուահյակ աղբյուրներով, շողշողուն աստղերով շատ բարձր առաստաղ ունեցող այս հսկա դահլիճի բեմում մոտ 60 երաժիշտ լույսի տարբեր երանգների հանդերձավորմամբ մատուցում է շանսոնիեի բառն ու մեղեդին: 1873-ին հիմնադրված, Ֆրանսիայի հնագույն նվագախմբերից մեկը L’Orchestre Colonne, որ իր անունը ժառանգել է հիմնադիր ջութակահար դիրիժոր **Էդուարդ Քոլոննից**, Փարիզի եւ ֆրանսիական երաժշտական կյանքում նշանակալի դերակատարում ունեցող նվագախումբ է: Հիշարժան է եղել 1981-ի ապրիլի 13-ին նվագախմբի հետ Ազնավուրի ելույթը: Այս դահլիճում նստածներից շատերը հիշում են այդ համերգը: Նրանք էլ երեւի ինձ նման 60 երաժշտի մեջ որոնում են Շառլ Ազնավուրին:

47-ամյա ֆրանսիացի տաղանդավոր դիրիժոր Ալեքսանդրա Քրավերոն տիրապետում է հանդիսասրահին կախարդելու արվեստին: Ալ կարմիր շապիկով, սեւ կոստյումով փոքրամարմին այդ կինը փոխանցում է Ազնավուրի էներգիան ու ռիթմը՝ ձեռքերի եւ մարմնի շարժումներն այնքան օրգանական, որ թվում է, թե երաժշտական կառավարման հետ նա այդ ներկայացման մեջ Ազնավուրի դերակատարն է:

Շառլ Ազնավուրի երգացանկի ծանոթ ստեղծագործությունները սիմֆոնիկ նվագախմբի համար փոխադրել է ճապոնացի կոմպոզիտոր, դաշնակահար **Նոբույուկի Նակաջիման** (Nobuyuki Nakajima): Իմ ունկնդրած լավագույն տարբերակն են դրանք, եւ մեծագույն հաճույք էր տեսնել, որ նույն օրվա դաշնակահարը հենց Նակաջիման էր, որն իրեն ուղղված դահլիճի որոտընդոստ ծափերին արձագանքում էր մինչեւ գետին խոնարհումով:

Formidable, La Boheme, Emmenez-moi ...Ազնավուրի հանրահայտ ստեղծագործությունները անվանի ֆրանսիացի երգիչ Ժյուլ Գրիզոն կատարում է մեծ վարպետությամբ, անասելի զգացմունքայնությամբ: Ակորդեոնահարուհի **Մագալի Ռիփոլլը** (Magali Ripoll), որ այս համերգին նաեւ իր ձայնով է Ազնավուրի ստեղծագործության հետ, 2011-2018-ին ուղեկցել է Շառլ Ազնավուրին համաշխարհային համերգային շրջագայությունների ժամանակ: Նա էլ Գրիզոյի նման առանձնահատուկ սիրո տուրք է մատուցում բեմից 100-ամյա Արտիստին ու նրա հանդիսատեսին: Հանդիսասրահը փաստում է, որ բոլոր երգերի բոլոր բառերն անգիր գիտե, եւ երբ բեմից արտոնում են բարձր երգել, ձայնակցում է: Հանդիսասրահն ապրում է Ազնավուրով, նրա երգերը ֆրանսիացիների ապրած կյանքի անբաժան մասն են, շատերը խոսում են հենց նրա տողերը առօրյա ներմուծելով, Ազնավուրի բառերը դաջված են ֆրանսիացիների սրտում, մտքում: Նա Ֆրանսիայի գրավոր, բանավոր ժառանգությունն է:

Հրաշալի համերգն ավարտվեց: Ալֆորվիլցի հայերը մի քիչ դժգոհ էին՝ համերգի ծրագիրը կազմելիս հաշվի չէին առել, որ Ազնավուրը 100 տոկոսով նաեւ հայ է, չէին ընդգրկել «Քեզ համար, Հայաստանը», «Նրանք ընկան» երգերը... Իսկ Le Grand Rex -ի առջեւ դեռ խմբված է հանդիսատեսը, տուն չի գնում, չի կարողանում արագ հեռանալ սիրո արվեստի վայելքի այն վայրից, որտեղ բոլորին հավաքել էր Ազնավուրը: Որքան էլ բարձրակարգ էր համերգը, սակայն Ազնավուրին բեմում կենդանի տեսած, լսած մարդը հենց նրա՛ն էր որոնում: Ոչ միայն այն պատճառով, որ 100-ամյակին երգելու խոստումը դրժել է Ազնավուրը...Նա պոետ էր, մարդ նվագախումբ, եւ իրենով փակվում է մի դարաշրջան...

Բայց նաեւ բացվում, որտեղ երկու հին բարեկամ ժողովուրդներ՝ ֆրանսիացիներն ու հայերը փայփայելու են նրա հիշատակն ու ժառանգությունը՝ երանի տալով նրանց, որ Ազնավուրի ժամանակակիցն են եղել:

# Սուսան Ավանեսյանի «Հերոսամարտ» նկարաշարը՝ զգայուն վրձնով



Նկարչուհի **Սուսան Ավանեսյանին** դիմանկարի ժանրը հնարավորություն է տվել իրականացնել վաղուցվա մտահղացումը՝ ստեղծել մեծ շարք, որտեղ կներառվեն տարբեր ժամանակաշրջաններում ապրած եւ հայ ժողովրդի կյանքում մեծ ներդրում ունեցած մարդկանց՝ հայի լավագույն տեսակի դիմանկարները: Նվիրյալների, որոնք չեն խնայել իրենց ունեցած ամենաթանկ բանը՝ կյանքը հանուն երկրի ու ժողովրդի: Այդ տեսակին գտնելու եւ արժեւորելու համար նախ պետք էր ուսումնասիրել երկրի ու ժողովրդի պատմությունը, այդ պատմությունը կերտած հերոսների կենսագրությունը:

Սուսան Ավանեսյանի՝ տարիներով ստեղծված եւ «Հերոսամարտ» խորագիրը կրող դիմանկարների ցուցահանդեսը բացվել է Հայաստանի Նկարչի տանը:: Միանգամից ասենք՝ սովորական



դիմանկարներ չենք տեսնելու, եթե այցելենք ցուցահանդես: Տեսնելու ենք հայերիս համար թանկ ու կարեւոր, նշանակալից եւ գնահատելի մարդկանց դիմանկարներ: Այդ մարդիկ նկարչուհու հերոսներն են դարձել: Հերոսներ՝ նախ բառի իսկական, ապա նաեւ փոխաբերական իմաստներով:Հերոսների դեմքում դա Նժդեհն է, Արամ Մանուկյանը, Կոմանդոսը, Լեոնիդ Ազգալդյանը,44-օրյա պատերազմում նահատակված մեր հերոսները, տարբեր ժամանակներում փայլատակած մեր շատ քաջեր: Նկարչուհու հերոսներն են դարձել նաեւ մեր ոլորտային խորհրդանիշները, մշակույթի, պատմության, գրականության նշանակալից դեմքեր՝ Արտակ Մովսիսյան, Պարիս Հերունի, Կոմիտաս, Զապել Եսայան, Անդրանիկ, այլք: Նկարչուհու շարքը հիանալի մտահղացում է՝ դիմանկարների միջոցով ներկայացնել հայ հերոսների քաջագործությունները, մեր պատմության, մշակույթի, գրականության նշանակալից ակնթարթները,



երեւույթները՝ դրանց ստեղծողների դիմանկարների միջոցով, այդ դիմանկարներն առիթ դարձնելով: Մի քանի



տասնյակ հիանալի, ջղուտ, միաժամանակ պայծառ շեշտադրումներով դիմանկարները մի ողջ հայկական աշխարհ (նաեւ՝ այլազգի հերոսների դիմանկարներ կան) ներկայացնող պատումների շարք են՝ հիշողություններ արթնացնող, իրադարձություններ պատմող, մեր անցյալի եւ ներկայի ազնվագույն պահերն ու դեմքերը հիշեցնող: Դիմանկարները հարուստ ներաշխարհ, հոգու մեծ լիցք եւ մեծ զգացումներ ունեցող մարդկանց աշխարհ է, որ ստեղծել է նկարչուհու զգայուն վրձինը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Ապրենք հրաշքի սպասումով

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Օր ու ժամ չի լինի, որ ՀՀ նորօրյա իշխանավորները, փոքրից մեծ թե հակառակը, չհայտարարեն. Հայաստանի հանրապետությունը նախորդ ժամանակահատվածի համեմատ հասել է աննախադեպ հաջողությունների: Որպես ասվածի հիմնավորում նշվում է, ասենք, ազգային դրամի կայունությունից մինչեւ տիեզերք արձակված կայանների իրողությունը, որոնք սովորականից հաճախ են շարքային հայաստանաբնակների որոշակի մասի կողմից տարօրինակ դիտարկվում: Թե ինչ գործոնների արդյունքում է մեր 400 դրամը որոշակի ժամանակահատված համարժեք ԱՄՆ-ի 1 դոլարին կամ Եվրոմիության 1 եվրոյին, հիմնավոր համոզմունք չկա թե՛ մասնագիտական շրջանակներում, թե՛ առավել եւս՝ շարքային քաղաքացիների մոտ: Այն մոտեցումը, թե դրամի հարաբերական կայունությունը պայմանավորված է, ասենք, 50.000 կամ 100.000 արժեցող թղթադրամների հետ, թերեւս տարօրինակ է, քանզի մեր մարդկանց 99 տոկոսը որեւէ պատկերացում չունի դրանց գոյության մասին, ոչ լսել է, ոչ տեսել դրանց վերաբերյալ որեւէ մոտեցում:Փոխարենը հանրությանը հրամցվում է տեղեկություն, որ ասենք, ՀՀ բանկային համակարգում ներդրված քաղաքացիների ավանդները ուր որ է կհասնեն, կամ արդեն հասել են ՀՀ դրամային համարժեքով 6.000.000.000.000-ի սահմանին: Եթե այն բաժանենք առկա մոտ 3 մլն բնակչության միջեւ, ստացվում է, որ նորածնից մինչեւ ավագագույններ յուրաքանչյուրին բաժին է ընկնում, ոչ ավել ոչ պակաս՝ 2.000.000 դրամ, ամերիկյան արժույթով՝ 5.000 դոլար:

Որն է այստեղ մասամբ թե ուղղակի-անուղղակի առումներով անբացատրելի տարօրինակը: Այն, որ այդ ահռելի գումարը չի ուղղվում դեպի պահանջարկ ունեցող ոլորտների արտադրա-արդյունաբերական ապրանքների արտադրությանը: Զգալի ծավալներով շինարարությունը վարկավորվում է, սակայն պարզ է, որ բնակարանաշինությունը միայն շենքերի հիմքը, պատերն ու տանիքը չեն, այլեւ հարյուրավոր այլ առաջնահերթություններ, սկսած դռների ու լուսամուտների փականներից մինչեւ զգալի գումարներ կազմող վերելակները: Որոշակի ակնածանքով եմ հիշում շվեյցարիացի բարձրագույն պաշտոնյայի այն հայտարարությունը լրագրողներից մեկին առ այն, որ ձեզ ձեր բնակարան բարձրացնող վերելակը շատ հավանական է պատրաստվել է մեր հարեւանությամբ գտնվող գյուղաքաղաքում: Ավաղ, մենք անգամ միլիոն բնակչությամբ Երեւանում որեւէ արտադրանք չունենք, որով կարող ենք առանձնանալ, թերեւս՝ հպարտանալ: Ասենք, պարզ ու հասարակ խնայողական էլեկտրալամպերի արտադրությամբ, որի ավանդույթն ունենք: Թբիլիսյան խճուղու հարեւանությամբ ձգվող էլեկտրալամպերի հզոր գործարանն այսօր էլ իր արտադրական մասնաշենքերով ու օժանդակ կառույցներով կանգուն է, միայն՝ անգործության մատնված: Բայց չէ՞ որ էլեկտրալամպը նյութերի առումով նվազագույն պահանջ ունի, գնողունակության հարցում՝ առավելագույն: Դրանց միլիոնավոր խմբաքանակներով պահանջարկ կա տարածաշրջանի երկրներում. եւ հարցը՝ թե ինչո՞ւ այսօրինակ ուղղություններով աշխատանք չի տարվում մեզանում, հնչում է ինքնաբերաբար: Նույնը կարող ենք նշել, շատ այլ արտադրանքների առումով, սկսած մանկական հեծանիվներից, որի ավանդույթն էլ ունենք, մինչեւ սառնարաններ ու ամենատարբեր էլեկտրական այլ սարքավորում: Պարենային առումով լրջագույնս սասանված է մեր անվտանգությունը, քանզի հողա-ջրա-ջերմային լավագույն պայմանների առկայության պարագայում անգամ մեզ անհարժեշտ հաց-հացամթերքների հացահատիկը չենք արտադրում, նաեւ ինչ-որ չափով՝ միսն ու կաթը:

Ումից ենք ինչ ակնկալում, երբ անգամ օրենսդիր իշխանահատվածն է զբաղված ինչ-որ բան շարժելու փոխարեն ամենուր հարկեր քերելով, որի գլխավոր նպատակներից մեկը իրենց աշխատավարձերը հարյուր հազարավոր դրամներով բարձրացնելն է, երբ կենսաթոշակառուներին շատ համարվեց անգամ ողորմելի երեք հազար դրամը: Սա այն պարագայում, երբ անօգնական այս մարդիկ թե՛ իրենց ստացած 40 հազար դրամից, թե՛ արտերկրներից իրենց հարազատներից ստացած գումարներից ահռելի հարկեր ու տուրքեր են մուծում, պետական բյուջեն հարստացնում: 700 դրամի խնձոր ես գնել, 110 դրամի ավելացված արժեքի հարկ պետք է վճարես, դեղ գնելով 20 տոկոս հարկ ես վճարում, ծխախոտի ու խմիչքների պարագայում՝ ակցիզային հարկ, որի տոկոսները տարբեր են: Սիրողական մակարդակով կատարված հաշվարկների արդյունքում ՀՀ 600 հազար կենսաթոշակառուների ու նպաստառուների մուծած հարկերն ու տուրքերը տարեկան կտրվածքով կազմում են 100.000.000.000 դրամ, դոլարային արտահայտությամբ՝ 250 մլն դոլար: Փոքր թե՞ մեծ թիվ է, գնահատեք ինքներդ: Ըստ՝ սույն տողերի հեղինակիս՝ երկրորդ տարբերակն է:

Ծանր շրջան է ապրում Հայաստանի հանրապետության տնտեսություն ասված հատվածը, որն այդպես էլ չի ուրվագծվում: Վերաարտահանումներով ու ստվերից հանված աշխատատեղերով կազմվող աղքատիկ բյուջեն ի զորու չէ նվազագույնս գոհացնել հայաստանաբնակին, սա է տխուր փաստը:

Ապրենք ինչ-որ հրաշքի սպասումով:

21.05.2024թ.

## Իմաստաբանական բառարան

### «Չստուգաբանություն»

«Կոթող» բառը ստուգաբանված չէ: Դրա ծագման մասին ընդամենը կան մի շարք ոչ գիտական ենթադրություններ:

❖ Օրինակ՝ հակառակ բառի արտաքին նմանության, ինչպես «Հայկազեան լեզուի Նոր Բառգիրքն» է շփոթեցնում, այն կապ չունի «քյոթուք» բառի հետ: Այլ կերպ ասած՝ հայերեն «ԿՈԹՈՂ» եւ թուրքերեն «kötük» բառերի նմանությունը պատահական է:

❖ Կոթողը չի առնչվում նաեւ «կաթողիկե», առավել եւս՝ «կաթողիկոս» բառերի հետ, այնպես, ինչպես գռեհկաբար ստուգաբանել է **Հիւնքեարպէյէնտեան Տեր-Յովհաննէս** քահանան:

❖ Կոթողը ոչ մի ազգակցական կապ չունի նաեւ ծագումով անհայտ «կոթ» բառի հետ, որն իրավացիորեն վկայված է **Գեւորգ Ջահուկյանի** «Հայերեն ստուգաբանական բառարանում»:

Եվ վերջապես, ո՛չ արտաքին նմանությամբ, ո՛չ էլ իմաստային ու գործառութային տրամաբանությամբ, ԿՈԹՈՂ-ը կապ չունի նաեւ ԱԽՈՌ բառի հետ, այնպես, ինչպես ոմանք փորձում են հուշարձանը նմանեցնել ձիանոցի, որտեղ անհայտ ծագումով մարդիկ գնում ու պատերին մոմ են կպցնում:

Հետեւաբար, պետք է շատ զգույշ լինել, որ Մատենադարանի ու Կոնսերվատորիայի նման ԿՈԹՈՂԱՅԻՆ հուշարձանները պատահաբար չհայտնվեն մեր երկրին միլիարդների եկամուտներ բերող շենքերի ցուցակում:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Լոս Անջելեսի վերատեսչական վարչությունը պատվում է երեք ամերիկահայերի

Լոս Անջելեսում այս տարի առաջին անգամ «Հայոց պատմության ամիս» հայտարարված միջոցառման ավարտին, ապրիլի 30-ին, քաղաքային վերատեսչական վարչության անդամ **Քեթրին Բարջերը** պատվել է երեք ամերիկահայերի, արտասանելով հետեւյալ խոսքերը. «Հիշատակելով ամբողջ ապրիլ ամսվա ընթացքում Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցը. մենք պարտավոր ենք նաեւ ժամանակ տրամադրել եւ ճանաչել մեր կողքին ապրող հայերի, համայնքային առաջնորդների եւ վարչական պատասխանատու պաշտոններ զբաղեցնող անձերի նշանակալի ներդրումները մեր կյանքում: Մենք բախտավոր ենք, որ Լոս Անջելեսում ունենք կենսունակ եւ բարգավաճող հայկական ոգի»:







Պատվո արժանացածները տարաբնույթ անցյալով, բայց բացառիկ հաջողություններ արձանագրած մասնագետներ են, որոնցից առաջինը **Նաիրի Տերտերյանն** է Պասադենայից: Մոտ 30 տարի նա առանցքային դերակատարություն է ունեցել Հայ Օգնության ընկերակցության կենտրոնական գործադիր վարչությունում: Եղել է նախագահ եւ փոխնախագահ այն հանձնախմբերի, որոնք մարդասիրական օգնություն են ցուցաբերել ճգնաժամային գոտիներում: 2022-ին այցելել է Արցախի 44-օրյա պատերազմի զոհերի ընտանիքներին օգնություն ցուցաբերելու եւ կենսունակ կյանքի որոշակի նախագծեր մշակելու: 2022-ի նոյեմբերին Լիբանան է մեկնել օգնելու 2020-ի պայթյունից տուժած ընտանիքներին:

«Այս ճանաչումն ու գնահատանքը կառավարության կողմից մեծ նշանակություն ունի ինձ համար: Այն հաստատում է մեր գործադրած ջանքերի կարեւորությունն ու ճանաչումը մեր համայնքային կյանքից դուրս», ասել է նա:

Երկրորդը դոկտ. **Վարդան Թաշճյանն** է, որ հիմնադիրն է «Byblos Babias Center» մանկաբուժարանի եւ համահիմնադիրը «Հայ բժիշկների համաշխարհային կոնգրես»-ի (Armenian Medical world Congress): Ծնվել է 1933-ին Լիբանանում, Բեյրութի գաղթակայանում, որի բնակիչները Ցեղասպանությունը վերապրած հայեր էին: Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներին տեղափոխվել է ԱՄՆ, Լոս Անջելես, որտեղ 1989-ին ստացել է ընդհանուր բժշկության եւ վիրաբուժության ամերիկյան արտոնագիր եւ շարունակել «անտունիներում բժշկելու» իր առաքելությունը: «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության խորհրդատուն է: Նաեւ բանաստեղծ եւ գրող: Ունի հրատարակված հատորներ, որոնց թվում են «Գաղթակայանէն բժշկութիւն՝ Անտունի Դարմանող Անտունին» եւ «Բժիշկ, հիւանդ եւ դեղորայք» գրքերը, հրատարակված Լոս Անջելեսում:

«Մեծ պատիվ է ինձ համար արժանանալ նման գնահատանքի մի անձնավորության կողմից, որ իրավազրկվածների պաշտպանն է եղել: Որպես Ցեղասպանության հետեւանքում որբ մնացած հայորդի, ես իմ կարելին արել եմ անտուն մնացած տարբեր ազգերի փախստականներին օգնելու, նրանց հոգսը թեթեւացնելու համար: Համախմբված բարեգործությամբ մենք կարող ենք էապես փոխել մեր կյանքը», նշել է նա:

Պատվի արժանացած երրորդ անձնավորությունը **Թալին Յագուբյանն** է, որ կարեւոր պաշտոններ է զբաղեցրել Ամերիկայի հայկական համագումարի, Հայ-ամերիկյան թանգարանի եւ մշակութային կենտրոնի, ինչպես նաեւ Հայաստան հիմնադրամի վարչական հանձնախմբերում: Իր անմնացորդ ներդրումն է ունեցել ինչպես ՀԲԸՄ-ի արեւմտյան շրջանի, այնպես էլ Հայոց ցեղասպանության հարյուրամյակի հիշատակման կոմիտեներում: 2015-ին կազմակերպել է 160 հազար մարդկանց խաղաղ երթը Լոս Անջելեսում: Տնտեսագիտության եւ իրավագիտության մասնագիտությամբ նա դասավանդում է Հարավային Կալիֆոռնիա Համալսարանի Գուլդ իրավագիտության ֆակուլտետում: Նրա ջանքերը հիմնականում կենտրոնացած են Ամերիկայում հայ ինքնության պահպանմանն ու Հայաստան-Մ. Նահանգներ հարաբերությունների բարելավմանն ուղղված աշխատանքների վրա:

«Ձգտում եմ հնարավորինս բարելավել համայնքները: Գտնում եմ պարտքի զգացումից դրդված եւ ոչ թե գովասանքների արժանանալու ակնկալիքով: Բայց երբ կատարվածը այսքան բարի եւ անկեղծ ճանաչման ու գնահատման է արժանանում, այն անշուշտ ոգեշնչում է ինձ եւ մղում համայնքին ծառայելու իմ պարտավորվածությունը վերանորոգելու», ասել է նա:

Անգլ. բնագրից պատրաստեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**

*Քաղաքական վերլուծաբան, ԵՊՀ Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն*

# Միջազգային գիտաժողով բազմակենտրոն աշխարհում Ռուսաստանի լիարժեք ազդեցության եւ ձգողականության կենտրոն լինելու մասին

**Մայիսի 23 եւ 24-ին Մոսկվայում տեղի ունեցավ «Ռուսաստանը եւ աշխարհը. երկխոսություններ 2024: Ձգողականության ուժեր» խորագրով VIII-րդ միջազգային կոնֆերանսը: Միջոցառման կազմակերպիչն էր Հաղորդակցությունների զարգացման ազգային հետազոտական ինստիտուտը: Զեկուցողի իրավունքով գիտաժողովին մասնակցում էինք տողերիս հեղինակը եւ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ամբիոնի դոցենտ, Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի փորձագետ Գրիգոր Բալասանյանը: Մոսկովյան այս գիտաժողովը շատ ներկայացուցչական էր: Մասնակցում էին ճանաչված քաղաքական ու հասարակական գործիչներ, գիտության եւ կրթության բարձրաստիճան կազմակերպիչներ Սլովակիայից, Բուլղարիայից, Սերբիայից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ուզբեկստանից, Տաջիկստանից եւ Հայաստանից: Բացման հանդիսավոր արարողության ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկան ՌԴ փոխարդգործնախարար Միխայիլ Գալուզինը, Պետական Դումայի եւ Դաշնության Խորհրդի ներկայացուցիչներ, Ռուսաստանում պետական եւ գիտական կարեւոր հաստատությունների ղեկավարներ:**

**Այս հոդվածում մենք նպատակ ենք դրել ներկայացնելու Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցության եւ երկխոսության զարգացման արդի վիճակը, ձեւակերպել այն առաջնահերթությունները, որոնք ստեղծում են կենսունակ օրակարգեր մեր արտաքին քաղաքականության այդ վեկտորը առաջ տանելու համար:**

## Ճանաչել Ռուսաստանը որպես բազմակենտրոն աշխարհի ձգողականության լիարժեք կենտրոն

5-րդ բաժանմունքում, որտեղ Հայաստանում Ռուսաստանի մասին ժամանակակից գիտության վիճակի մասին զեկուցում էինք մենք, ներկայացված էին վերոհիշյալ բոլոր արտասահմանյան պետությունների ներկայացուցիչները: Տեղին է ասել, որ մի քանի տարվա անդուլ ջանքերի արդյունքում, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանին երկու տարի առաջ հաջողվեց միջազգային հարաբերությունների ֆակուլտետի համակարգում ստեղծել Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն: Այդ արդիական նախաձեռնությունը շուտով նկատվեց եւ ԵՊՀ-ն համագործակցության պայմանագիր կնքեց Հաղորդակցությունների զարգացման հետազոտական ինստիտուտի (ՀԶՌԱԻ) հետ, խնդիր դնելով սկսել միասնական աշխատանք Ռուսաստանի մասին գիտական ու փորձագիտական գիտելիքներ ձեւավորելու եւ ուսանողության եւ գիտափորձագիտական հանրության շրջանում տարածելու նպատակով: Հայկական այս փորձը շատ արագ ընդօրինակման արժանացավ եւ մոսկովյան վերոհիշյալ ինստիտուտի հետ համատեղ նման կենտրոններ ստեղծվեցին Բելգրադում (Սերբիա), Բիշկեկում (Ղրղզստան) եւ Դուշանբեում (Տաջիկստան): Հիմա քննարկումներ են գնում նաեւ այլ երկրներում նման կենտրոններ ստեղծելու վերաբերյալ: Այս համագործակցության նպատակը շատ պարզ է. խթանել Ռուսաստանի մասին ժամանակակից քաղաքագիտական գիտելիքի ստեղծումը:

Կարեւոր է նշել, որ ՀԶՌԱԻ-ն շատ հեղինակավոր եւ Ռուսաստանի սահմաններից դուրս լայնորեն ճանաչված գիտահետազոտական կենտրոն է, որը ամեն տարի միջազգային համագործակցության արդյունքում սահմանում է Ռուսաստանի հետ եվրասիական տարածքի պետությունների բարեկամության վարկանիշային աղյուսակը: Արդեն երեք տարի անընդմեջ այդ աղյուսակը հիմք է դառնում ռուսաստանյան բարձր պետական իշխանության մարմինների եւ հասարակական ու գիտական տարբեր հաստատությունների համար եվրասիական պետությունների հետ համագործակցության երկկողմ, արդիական հնչողություն ունեցող օրակարգեր ձեւակերպելու գործում: Արդեն երկրորդ տարին է, ինչ տողերիս հեղինակը եւ Հայաստանի ու Ռուսաստանի գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս **Գեւորգ Պողոսյանը** ներգրավված ենք այդ վարկանիշային աղյուսակի ստեղծման աշխատանքում: Արժե հիշեցնել, որ եթե 2021թ. Հայաստանը զբաղեցնում էր բարեկամների շարքում երրորդ հորիզոնականը, իսկ 2022թ. 5-րդ տեղը, ապա 2023թ. եզրափակեց բարեկամների ցուցակը, հայտնվելով 10-րդ հորիզոնականում: Մեր երկրից հետո հարաբերականորեն բարեկամ/հարաբերականորեն ոչ բարեկամ ճանաչված Վրաստանն է: Ասվածից արդեն իսկ երեւում է, որ համագործակցության մակարդակի անկմամբ մտահոգված քաղաքական եւ հասարակական շրջանակները մտածում են այն նոր, ոչ ստանդարտ քայլերի ու մոտեցումների մասին, որոնք կկանխեին համագործակցության մակարդակի անկումը եւ թույլ չէին տա, որ Հայաստանը հայտնվեր Ռուսաստանին ոչ բարեկամ երկրների շարքում (Մոլդովա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Ուկրաինա):




Մեր համագործակցության օրինակով մենք ցույց տվեցինք, որ Ռուսաստանի հետ կապերի այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են Ռուսաստանի մասին գիտական հենքով գիտելիքի տարածումը, ռուսաց լեզվի դերը Հայաստանում, երկկողմ գիտամշակութային համագործակցությունը եւ այլն, վերջին տարիներին Հայաստանում չի իջել ավելի ցածր մակարդակի: Ընդհակառակը, օրինակ՝ քաղաքագետների եւ միջազգայնագետների շրջանում կայուն մեծ թիվ են կազմում բակալավրիատի եւ մագիստրատուրայի ավարտական աշխատանքները Ռուսաստանի մասին, ուսանողական գիտական աշխատանքներում հետաքրքրությունը այդ թեմատիկայի մասին նույնիսկ մեծանում է հայտնի քաղաքական պատճառներով, իսկ ռուսաստանաբնակ ռելոկանտների ներկայությունը Հայաստանում ուղղակի դրական ազդեցություն է ունեցել ռուսաց լեզվի տարածման շրջանակների վրա:

Հայաստանը եզրնթաց է պարել այս վարկանիշային աղյուսակում միայն քաղաքական հարաբերությունների վատացման պատճառով: 44-օրյա պատերազմի եւ 2023թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի հայության բռնագաղթի արդյունքում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները հայտնվել են պատմական մինիմումի մակարդակի վրա եւ փաստորեն առ այսօր շարունակում են անկում ապրել: Այս վիճակը չի կարող չանհանգստացնել հայ-ռուսական համագործակցության շարունակման եւ զարգացման կողմնակիցներին: Ակնհայտ է, որ այս հարաբերությունների լավացման ճանապարհներ եւ ուղղություններ չգտնելու դեպքում մեր երկրի անվտանգության մակարդակը Հարավային Կովկասի գերբարդ եւ աննպաստ պայմաններում շարունակելու է շատ անհանգստացնող մնալ: Այս մասին մենք քիչ ուշ կասենք մեր առաջարկությունները:

## Ռուսաստանը որպես ազդեցության եւ ձգողականության կենտրոն եվրասիական տարածքում

Մոսկովյան VIII-րդ միջազգային այս գիտաժողովը աննախադեպ ներկայանալի էր: Ուկրաինական ճգնաժամի սրման պայմաններում Ռուսաստանում շատ լավ հասկանում են, որ անհրաժեշտ է ամրապնդել մշակութային եւ հումանիտար համագործակցությունը այն բոլոր երկրների հետ, ում հետ որ Ռուսաստանը զարգացնում է քաղաքական եւ տնտեսական փոխշահավետ համագործակցություն: Ակնհայտ է, որ Ռուսաստանի դիրքերը ամրապնդվում են Կենտրոնական Ասիայում: Այս երկրները նոր նախաձեռնություններով ու նոր մոտեցումներով ցանկանում են խորհրդային ժամանակների էմոցիոնալ եւ քաղաքակրթական հենքի վրա զարգացնել բազմաբնույթ կապեր նոր Ռուսաստանի հետ, որովհետեւ նրա տնտեսությունը զարգացման բուռն ժամանակներ է ապրում: Գիտաժողովում շատ հետաքրքրական զեկուցումներ կային այն մասին, որ պետք է հաղթահարված համարել մի շարք կարծրատիպեր եվրասիական Ռուսաստանի վերաբերյալ: Օրինակ, պետք է իմանալ, որ այդ երկիրն այսօր զբաղեցնում է համաշխարհային տնտեսության 3,7% : Պետք է իմանալ, որ Ռուսաստանն արդեն գերազանցում է Գերմանիայի ՀՆԱ-ն եւ զբաղեցրել է 5-րդ տնտեսության պատվավոր տեղը աշխարհում: Ռուսաստանը խնդիր է դրել 2030թ. գերազանցել նաեւ Ճապոնիային եւ դառնալ աշխարհի 4-րդ տնտեսությունը: Տնտեսության տարբեր ճյուղերի հետեւողականորեն զարգացումը, ռազմավարական ճյուղերում ինքնաբավության ապահովումը եւ ներկրմանը փոխարինող արտադրությունների ստեղծումը Ռուսաստանը դարձնում են հարգանք ներշնչող կենտրոն ժամանակակից բազմակենտրոն աշխարհում: Այս իրավիճակից փորձում են օգուտներ քաղել շնչին ընկնող ՀՆԱ-ի ավելի համեստ ցուցանիշներ ունեցող նրա հարեւանները իրենց տնտեսությունների զարգացմանը լրացուցիչ խթան հաղորդելու միջոցով:

Հարավային Կովկասից այս գիտաժողովին մասնակցում էին միայն հայ պատվիրակներ: Վրաստանից եւ Ադրբեջանից ներկայացուցիչներ չկային: Գիտաժողովի կուլուարներում տիրող տրամադրությունն այն էր, որպեսզի գտնվեն նոր միջոցներ, նոր հնարավորություններ Հայաստանի հետ համագործակցությունը զարգացնելու եւ հարաբերությունների ընդհանուր մակարդակը բարելավելու համար: Եթե հարկավոր է, ապա մեր Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնը կարող է դառնալ պատշաճ գիտափորձագիտական հարթակ կլոր սեղաններ եւ սեմինարներ կազմակերպելու համար, որտեղ մեր գիտնականներն ու հետազոտողները կկարողանան միասին մտածել հայ-ռուսական հարաբերություններին նոր մակարդակ ու բովանդակություն հաղորդելու մասին:

Մեր տպավորությունն այն է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելը ոչ թե միակ գլխավոր նպատակն է լինելու, այլ աշխատանքի կարեւոր ուղղություններից մեկը: Պետք է հասկանալ, որ հարկավոր է միաժամանակ զարգացնել նաեւ հարաբերությունները բարեկամ Իրանի հետ եւ սա օրակարգային անհետաձգելի խնդիր է: Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ համագործակցության եզրեր սահմանելը նույնպես շատ կարեւոր խնդիր է: Կարճ ասած՝ «3+3» խորհրդատվական ձեւաչափի բոլոր մասնակիցների հետ պետք է բարելավել քաղաքական հարաբերությունները: Ճիշտ է, որ Ռուսաստանը միայնակ չի ազդելու այլեւս Հարավային Կովկասի վրա: Բայց սխալ է նաեւ մտածել, որ Ռուսաստանը առանց պայքարի հեռանալու է Հարավային Կովկասից: Սա մոլորություն է: Հետեւաբար, Թուրքիայի առաջխաղացումը Հարավային Կովկասում ստիպելու է Ռուսաստանին համագործակցային քաղաքականություն վարել այդ երկրի հետ սեփական դիրքերը պաշտպանելու համար: Մեկ այլ առիթով մենք կխոսենք այն մասին, թե ի՞նչ է պետք անել, որպեսզի Հայաստանը հերթական անգամ բութ գործիք չդառնա ռուս-թուրքական մրցակցության մեջ, այլ կարողանա ներդաշնակել այդ վեկտորների ազդեցությունը տարածաշրջանային գործընթացների վրա: Շատ կարեւոր է նոր բովանդակություն հաղորդել մերօրյա հայ-ռուսական հարաբերություններին: Շատ կարեւոր է մտածել (եթե անհրաժեշտ է) նոր պայմաններին հարմար նոր համագործակցությանը նոր ինստիտուցիոնալ հիմքեր հաղորդելու մասին: Սա լուծվող հարցերի շարք է, եթե չարամտորեն եւ Հայաստանը քայքայելու նպատակով չարվեն քայլեր, որոնք ակնհայտորեն զգացնել են տալիս իրենց մասին:

Քաղաքական այդ գործընթացին նպաստող հասարակական երկխոսությանը եւ հանրային դիվանագիտությանը պետք է պատշաճ ուշադրություն դարձնել: Մեր գիտափորձագիտական հանրությունն ունի բավարար ներուժ հայ-ռուսական հարաբերությունների վաստարացած մթնոլորտը բարեփոխելու գործին մասնակցելու: Ոչ ոք չի ասում, թե պետք է բարելավել այդ հարաբերությունները Արեւմուտքի կամ Չինաստանի հետ մեր հարաբերությունների հաշվին: Ոչ ոք: Պարզապես ակնհայտ է, որ այդ հարաբերություններն ունեն իրենց կարեւորագույն տեղը մեր անվտանգության ապահովման գործում, եւ սա ուրանալ արդեն չի ստացվի:

ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

# Կայացել է «Արվեստի հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» միջազգային գիտաժողովը

Սույն թվականի մայիսի 17-ին եւ 18-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ **«Արվեստի հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում»** միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքը եւ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար **Յուրի Սուվարյանը`** նշելով, որ 126 տարի առաջ հրատարակված «Անահիտ» հանդեսից այսօր էլ մի շարք դասեր ունենք քաղելու. առաջինը, որ հայերենը պետք է պահպանել եւ զարգացնել իբրեւ գիտական լեզու, եւ որ հանդեսում խորհուրդ է տրվում չդավանել միայն արեւմտյան կողմնորոշմանը, այլ, առհասարակ, բոլոր կողմնորոշումները պետք է լինեն նախ եւ առաջ հայամետի շուրջ:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Աննա Ասատրյանը** նշեց` պարբերական մամուլի ուսումնասիրությունն արվեստագիտության կարեւորագույն ուղղություններից մեկն է:




«Առաջին անգամ հայ ակադեմիական արվեստագիտությունն անդրադառնում է հայ պարբերական մամուլին` «Անահիտ» հանդեսի օրինակով: Հայտնի է, թե ինչ ծանրակշիռ նշանակություն եւ դեր ունի հայ պարբերական մամուլն արվեստագիտության, արվեստի քննադատության ձեւավորման, կայացման եւ զարգացման գործում: «Անահիտ» հանդեսը հրատարակել է ոչ միայն հոդվածներ Կոմիտասի գործունեության վերաբերյալ, նրա համերգային շրջագայությունների մասին, այլ նաեւ Կոմիտասի գիտական հետազոտությունների արդյունքները: Այնպես որ, երաժշտագիտության մեջ Չոպանյանը կանգնած է կոմիտասագիտության ակունքներում:», - ասաց Աննա Ասատրյանը:

Նա շեշտեց նաեւ արվեստի քննադատության կարեւորությունը: «Ներկայում մեր գիտնականները հեռացել են արվեստի քննադատությունից, եւ դա ցավոտ հարց է: Կարծում եմ, որ այս գիտաժողովը խթան կհանդիսանա, որպեսզի մեր գիտնականները գիտական հետազոտություններին զուգահեռ զբաղվեն նաեւ երաժշտական, թատերական եւ գեղարվեստական քննադատությամբ: Այս առումով գիտաժողովն ունի նաեւ կիրառական նշանակություն», - ասաց Աննա Ասատրյանը:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան առաջատար գիտնականներ ու երիտասարդ հետազոտողներ Հայաստանից եւ արտերկրից` Ռուսաստանից, Ֆրանսիայից, Լիբանանից եւ Չինաստանից, բացահայտելով «Անահիտ» հանդեսի ներդրումը հայ արվեստագիտության` երաժշտագիտության, արվեստաբանության, թատերագիտության եւ ճարտարապետագիտության, ինչպես նաեւ գրականագիտության ասպարեզում: Նախատեսվում է առաջիկայում հրատարակել գիտաժողովի զեկուցումների ժողովածուն:

# Աղետի գոտի

⇨1

## Կտրվել է Հայաստանն աշխարհին կապող մի երակ եւս. պետք է յոթ չափել, մեկ կտրել

Վարարած Դեբեդը կանգնեցրել է նաեւ երկաթուղու աշխատանքը: **«Ազգ»**-ի տեղեկություններով` գիծ Դեբեդը քշել-տարել է ավելի քան 2.5 կմ երկաթգիծ: Ինչպե՞ս եւ ի՞նչ ժամկետներում կվերականգնվի երկաթուղու աշխատանքը. հարցը նախօրեին քննարկվել է ԵՏՄ խորհրդի նիստում:

«Ռուսական երկաթուղիներ» ընկերությունից հավաստիացրել են, որ հնարավոր ամենասեղմ ժամկետներում կվերականգնեն երկաթուղու` ջրասույզ եղած կամ վնասված հատվածները:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար **Գնել Սանոսյանի** խոսքով` մինչեւ երկաթգծերի ամբողջական վերանորոգումը կամ տեղադրումը, միջանկյալ լուծում է գտնվել:

«Այրում կայարանից դեպի Ալավերդի բավականին ժամանակ կպահանջվի վերականգնելու համար: Երկաթգծով բեռները կտեղափոխենք մինչեւ Այրում կայարան: Այդ հատվածում կա մի կամուրջ, որը նախկինում ծառայել է պահածոների գործարանին, ապահովել է մատակարարումը: Այն երկար ժամանակ չի աշխատում: Այդ երկաթգծային կամուրջը հիմա մենք վերափոխում-դարձնում ենք ավտոմոբիլային կամուրջ, ինչի վրայով կարող են բեռնատարներ անցնել»,- ասում է նախարարը:

Այսինքն` Հայաստան մտնող գնացքները կհասնեն մինչեւ Այրում կայարան, այնուհետեւ` վերոնշյալ կամրջով կկապվեն Մ6 մայրուղուն:

**«Ազգ»**-ի տեղեկություններով, պահածոների գործարանի` երկաթգծային կամուրջը չի շահագործվել տարիներ ի վեր` մոտ 30 տարի: Եվ, բնականաբար, խիստ անհրաժեշտ է, որ այն անցի համալիր ուսումնասիրություն: Տարիների ընթացքում, ենթադրաբար, մաշվել, կոռոզիայի ենթարկվել ու շարքից դուրս է եկել թե՛ երկաթը, թե՛ բետոնը: Եվ մինչեւ համալիր ու մանրազնին ուսումնասիրություն, այնուհետեւ` փորձագիտական եզրակացություն չլինի, դա շահագործել պարզապես չի կարելի:




## Կամրջակը` արտաքին աշխարհին կապող կածան

Ախթալա քաղաքը եւ հարակից 6 բնակավայրերը արտաքին աշխարհին կապել են երկաթե կոնստրուկցիաներով զոդած կամրջակով: Պատկան մարմինները դա համարում են «համայնքները շրջափակումից դուրս բերել»: Տեղանքին եւ աղետի ծավալներին անծանոթ մարդկանց կարող է թվալ, թե կառավարությունը, քափ-քրտինք կտրած, 5 օրում կամուրջ ու ճանապարհ գցել: Խոսքը իրար կցմցած երկաթների մասին է` հետիոտնային կամրջի, որով հնարավոր է հաց, ջուր եւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ հասցնել: Ինչն արվում էր նաեւ անտառամիջյան ճանապարհով` «Ուրալ»-ի միջոցով:

Որեւէ մեկը, անխոս, չի էլ ակնկալում, թե մի քանի օրում հնարավոր էր կամուրջ գցել (այլ երկրներում իհարկե հնարավոր է, տարբերակները շատ են), բայցեւ գոնե էթիկապես տգեղ է կամրջակի տեղադրումը հավասարեցնել ապաշրջափակմանը:

Պատկան մարմինները, լավ կլինի, շատ գործ անեն` քիչ լուսանկարվեն ու իրավիճակը ներկայացնեն ըստ էության:

# Գործնական սեմինար քոլեջում նվիրված էներգետիկ խնդիրներին

Էներգետիկ անվտանգության տեսակետից կարեւոր նշանակություն ունի համապատասխան մասնագիտական կադրերի պատրաստումը: Այս տեսակետից հսկայական աշխատանքներ է կատարվում Երեւանի տարածաշրջանային պետական թիվ 2 քոլեջում (տնօրեն ֆիզ.մաթ.գիտությունների թեկնածու,դոցենտ Կ. Հայրապետյան): Վերջերս քոլեջում տեղի ունեցավ սեմինար-քննարկում «Ուսումնական հաստատությունների ու գործատուների համագործակցության խնդիրներ» թեմայով:

Քննարկման մասնակիցներն էին «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում ու սպասարկում» մասնագիտությունն ուսուցանող միջին ու նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենները եւ այլընտրանքային էներգիայի ոլորտի գործատուներ:



Միջոցառման ընթացքում քննարկվեցին վերոնշյալ մասնագիտության ուսումնական ծրագրերը, կրթություն - աշխատաշուկա համագործակցության խթանման ուղղությունները, ոլորտի գործատուների ընդգրկումն ուսումնական գործընթացին եւ այլ հարցեր: Միջոցառումը փոխադարձ արդյունավետ էր:

Անհրաժեշտ է նշել, որ քոլեջի ղեկավարությունը տնօրեն Կ.Հայրապետյանի անմիջական ղեկավարությամբ մեծ աշխատանքներ է կատարում այս ուղղությամբ: Այս տարի 11 սովորող կհանձնեն պետական քննություն եւ ստանալով որակավորում` կաշխատեն իրենց մասնագիտությամբ: Նրանք առաջին շրջանավարտներն են: Հաջողություն ցանկանանք նրանց:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

***Խմբագրության կողմից.-*** *Հարկ է նշել, որ քոլեջում իր բազմամյա փորձն ու գիտելիքները սիրով դասավանդում է Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, վաստակաշատ էներգետիկ, պրոֆեսոր, «Ազգ»-ի երկարամյա աշխատակից Ստեփան Պատիկյանը:*

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը`*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը` 286.110.1041780, տրուած` 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 30.05.2024, գինը` 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: